

Մայր Տաճարին վերանորոգութեան պատրաստութիւնները :

1627ին, Վարդապետի պահոց երկուշաբթի օրը, այն է 26 Յունիս, ձեռք զարկաւ Էջմիածնի «չինութեան եւ նորոգութեան»¹ :

Ինչպէս Գաւրիթեցի եւ ուրիշ ժամանակակիցներ միաբան կը վկայեն, Էջմիածին երկար տարիներէ ի վեր, յատկապէս 1604ի տարազրութենէն ետքը ամայացած վիճակի մէջ կը գտնուէր. որուն հետեւութեամբ կրած էր Տաճարին շէնքը կարեւոր մնասններ : Իսկ Մայր Աթոռը կողոպտուած էր իւր արդ ու զարդերէն, ոչ սպաս էր մնացած, ոչ կանթեղ կամ սեղանի ծածկոյթ, ոչ զգեստ եւ ոչ պաշտաման գրքեր :

Քանզուած էր եկեղեցւոյն «սալարկ յատակը» : Մեծ լոյսիջոյց լուսամուտները երեսի վրայ բաց էին առանց վանդակի. եւ կ'ընծայէին թռչուններու ազատ մուտ եւ ելք, որուն հետեւութեամբ ամէն տեղ բոյն դրած էին թռչունները եւ ծիրտով եւ ծիղերով առլցած եկեղեցին² : «Իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին եւ տանիքն ամենայն եւ երեսք որմոցն քանդքանդեալք եւ քարինքն թափեալք եւ որմոց յատակաց վէմքն փշրեալ եւ ծակոտեալ» :

¹ Գաւր. 303 եւ յաջ. մանր կը նկարագրէ Էջմիածնի վերանորոգութիւնը, որուն կը հետեւիմ :

² Էջմիածնի Թ. 2309 ձեռագրին մէջ կ'ըսուի. «Գրեթէ միայնակ եկեղեցին մնացեալ էր ի մէջ լայնածաւալ դաշտին, որոյ լուսնացոյցքն եղեալ էին մուտ եւ ելք թռչնոց եւ գրունք՝ անասնոց» :